

Օգինցեան փոքր ինչ մեծ էր Արկադիլից, քսանիննի մէջ, բայց նրա ներկալութեամբ Արկադիլն իրեն դպրանոցական, ուսանողիկ էր դրում, ասես թէ նրանց մէջ տարիքի մեծ տարբերութիւն չէր։ Մատվէլ Իլլիչը վառահեղ կերպարանքով ու շողմարար խօսքերով մօտեցաւ նրան, Արկադիլն մի կողմ քաշուեցաւ, բայց շարունակ դիտում էր և բոլոր կադրիլի միջոցին աչքը նրանից չէր հեռացնում։ Օգինցեան միատեսակ ազատութեամբ խօսում էր թէ բարձր պաշտօնեայի և թէ իւր պարակցի հետ. նա դուխն ու աչքերը ծանրութեամբ շուռ ածեց և մի ելկու անգամ հանդարտ կերպով ծիծաղեցաւ. նրա քիթն էլ, սովորաբար համարեա բոլոր ոռւս կանանց քթի նման, մի քիչ հաստ էր, և մորթի դռնն էլ աչքան մաքուր չէր. բայց և այնպէս Արկադիլն վճռեց, որ իւր կեանքում ալսպիսի սիրուն կ'իյն չէր տեսել։ Օգինցեակի ձայնը Արկադիլի ականջից չէր հեռանում. ասես թէ նոյն իսկ ալդ կնոջ շորի ծալքերն անգամ ուրիշ կանանց շորերի ծալքերից տարբեր էին, աւելի վախճաւոր ու լալն, և նրա մարմնի շարժումներն էլ մի առանձին սահունութիւն ունէին և բնական միևնոյն ժամանակ։

Սրբ որ մաղուրկալի եղանակը հնչել սկսան, Արկադիլն իւր տիկնոջ մօտ նստեց. նա մի քիչ վեհերկոտ էր և ուզում էր նրա հետ խօսել և միմիայն ձեռներով մազերն էր չփում և ոչ մի բառ չէր դնում ասելու։ Բայց ալդ երկար չտևեց. Օգինցեակի խաղաղութիւնը համակեց և նրան, քառորդ ժամ չանցած նա արդէն աղատօրէն պատմում էր իւր հօրը, իւր հօրեղբոր, Պետերբուրգում և գիւղում անցկացրած կեանքի մասին։ Օգինցեան քաղաքավարի համակրութեամբ ականջ էր դնում նրա պատմածներին, հովնարը թեթեակի բաց անում ու փակում։ Արկադիլի ատախօսութիւնն ընդհատում էր, երբ որ Օգինցեակին պարի էին հրաւիրում։ Սխտիկովը, ի միջի ալոց, նրան երկու անգամ հրաւիրեց, Օգինցեան վերադառնում էր, նորից տեղը նստում, ձեռքն առնում հովհարը. բայց մինչև անգամ նրա կուրծքը սովորականից աւելի արագ չէր շարժում։ Իսկ Արկադիլն դարձեալ վերսկսում էր իւր շատախօսութիւնները և լիովին համակուած էր երջանկութեամբ, որ մօտիկ է Օգինցեակին, որ խօսում է հետը՝ նախելով նրա աչքերին, նրա դեղանի ճակատին, նրա ամբողջ սիրուն, վեհ և խելացի դէմքին։ Օգինցեան ինքը քիչ էր խօ-

սում, բայց նրա խօսքերից երևում էր, որ ճանաչում էր կեանքը. Արկադիին նրա մի քանի նկատողութիւններից հետեցրեց, որ այս նորատի կիւնն արդէն շատ բան զգացել էր, շատ բանի վրայ միտք արել...

—Այդ ում հետ էիք խօսում, — հարցրեց Օդինցեան, — քանի դեռ Սիտնիկովը ձեզ ինձ մօտ չէր բերել:

—Նկատեցիք հա, — իւր հերթին հարցրեց Արկադիին. — Ի՞նչ երեւելի դէմք ունի, այնպէս չէ. Դա իմ բարեկամս է, Բազարով աղգանումնով:

Արկադիին սկսաւ «իւր բարեկամի» վրայ խօսել. Նա այնքան մանրամասն, այնպիսի ոգեորութեամբ սկսաւ նրա մասին խօսել, որ Օդինցեան շուռ եկաւ և ուշադրութեամբ նախեցաւ Բազարովի վրայ: Մինչ այս՝ մազուրկան մօտենում էր իւր վախճանին: Արկադիին ասիտոսն էր գալիս, որ բաժանուելու էր նրանից՝ մօտ մի ժամ շատ լաւ ժամանակ էր անցկացրել նրա կողքին: Ճիշտ է, նա այդ բոլոր միջոցին շարունակ զգում էր, որ նոր բարեկամուհին դէպ իրեն ներողամտաբար է վերաբերում, և թէ ինքը որպէս թէ պարտաւոր էր երախտագէտ լինել... բայց երիտասարդ սրտերն այդպիսի բանից չեն նեղում:

Երաժշտութիւնը դադարեց:

—Merci *), — ասաց Օդինցեան տեղիցը վերկենալով. — Դուք խոստացաք ինձ այցելութեան գալ. հետներդ բերէք նաև ձեր բարեկամին: Շատ հետաքրքիր եմ տեսնելու մի մարդ, որ համարձակութիւն ունի ոչ մի բանի չհաւատալու:

Նահանգապետը մօտեցաւ Օդինցեային, լալտնեց որ ընթրիքը պատրաստ է և մտազրաղ կերպարանքով թեւ տուաւ: Օդինցեան գնալիս շուռ եկաւ, որպէս զի մի վերջին անգամ էլ ժպտալ, և Արկադիին գլխով արաւ: Արկադիին խոնարհ գլուխ տուեց. նրա ետեիցը նախեցաւ (որքան վախճակազմ թուաց նրա իրանը, որ զեղուած էր սև մետաքսի մոխրաւուն փալլով) և մտածելով, «այս բոպէիս նա արդէն իմ գոլութիւնս մոռացաւ», իւր ներսում մի տեսակ վախելուչ հեղութիւն զգաց:

—Հը՞, — հարցրեց Բազարովը Արկադիին, — հէնց որ սա իրենց անկիւնը վերադարձաւ. — Բաւականութիւն ստացա՞ր:

*) Շնորհակալութիւն:

Հէնց նոր ինձ մի աղա ասաց, որ արդ տիկինն—օօօ. բայց կարծեմ արդ աղան ախմախի մէկն է: Իսկ դձու ինչ կարծիքի ես. քու կարծիքովդ էլ օօօ է:

—Նա արդ արտալատութիւնը լաւ չեմ հասկանում,—պատասխանեց Արկադիին:

—Ա՛յ քեզ բան. ինչ անմեղն ես եղել:

—Որ ասում եմ, կ'ընշանակէ չեմ հասկանում, թէ ինչ էր ուղում ասել քու աղան: Անկասկած, Օդինցևան խիստ քաղցրաբարով կ'իմ է, բայց աջնպէս սառն ու խիստ է պահում իրեն, որ...

—Վախեցիր Էն ջրից... զիտես էլի առակը,—վրայ բերեց Բազարովը:—Ասում ես սառն էր: Հէնց համն էլ դրա մէջն է: Պաղպաղակ հո սիրում ես:

—Գուցէ,—թիտակովն ասաց Սրկադիին,—արդ մասին կարող չեմ բան ասել: Ուղում է հետդ ծանօթանալ և խնդրեց, որ զնալիս քեզ էլ հետս տանեմ:

—Նրեակալում եմ, թէ իմ մասին ինչքե՛ր ասած կ'լինիս: Ասենք շատ լաւ ես արել: Տար ինձ էլ: Ո՛վ էլ որ լինի դա—նահանգական մի էգ առիժ, թէ «Էմանցիպէ» Կուկ:ինալի նըման, մի աջնպիսի ուսեր ունի, որ ես վաղուց տեսած չէի:

Բազարովի ցինիկական ոճը Արկադիի սրտին դիպաւ, բայց—ինչպէս արդ լաճախ պատահում է—նա իւր բարեկամին լանդիմանեց ո՛չ ալն բանի համար, որը իրեն դիւր չէր եկել...

—Ինչո՞ւ չես ընդունում, որ կանանց մէջ էլ մտքի ազատութիւն լինի.—ասաց նա ցած ձայնով:

—Նրա համար, եղբայր ջան, որ կանանց մէջ միմիայն անճոռնի կանալք են ազատ մտածում:

Խօսակցութիւնն հէնց այստեղ էլ կտրուեցաւ: Նրկու երիտասարդներն էլ ընթրիքից լետոյ անմիջապէս տուն դարձան: Կուկչինան նեարդոտ զալրութով, բայց և վեհերկոտ կերպով ծիծաղեց նրանց հետեից՝—նրա ինքնասիրութիւնը խորը վիրաւորուել էր նրանով, որ ոչ մէկը և ոչ միւսը իւր վրայ ուշադրութիւն չէր դարձրել: Խնջովքում նա ամենից ուշը մնաց և գիշերուալ ժամը չորսերին Սիտնիկովի հետ պարիզի ձևով պոկա-մաղուրկա պարեց: Այս խրատական տեսարանով էլ վերջացաւ նահանգապետի պարահանդէսը:

— Տեսնենք կաթնասունների որ դասակարգին է պատկանում սա,— միւս օրը Բաղարովն ասում էր Արկաղիլին՝ Օդինցեակի իջանած հիւրանոցի սանդուխքներից վեր բարձրանալով։— Քթիս փիս հոտ է գալիս։

— Զարմանում եմ վրադ,— բացականչեց Արկաղիլին։— Ի՛նչ, Գնւ, դու Բաղարով, հետեում ես ալն նեղ բարոյականութեան, որ...

— Տարօրինակ մարդ ես,— անհոգ կերպով ընդհատեց Բաղարովը։— Միթէ դեռ չգիտես, որ մեր լեզուով և մեզ համար «փիս հոտ» նշանակում է «լաւ հոտ»։ Ասել է շահ կալ։ Միթէ այս օր ինքդ չէիր ասողը, թէ տարօրինակ է եղել նրա ամուսնութիւնը, թէ պէտ իմ կարծիքովս հարուստ ծերուկի գնալը— ամենեին մի տարօրինակ բան չէ, ընդհակառակն, խոհեմութիւն է։ Ես քաղաքի ասէկոսէներին չեմ հաւատում, բայց սիրում եմ կարծել, ինչպէս ասում էր մեր նահանգապետը, որ զրանք ուղիղ են։

Արկաղիլն ոչինչ չպատասխանեց և բաղինեց սենեակի դուռը։ Նշանադրեստ հաղած մի երիտասարդ սպասաւոր երկու բարեկամներին տարաւ մի ընդարձակ սենեակ, որ, ինչպէս սովորաբար բոլոր ուսուց հիւրանոցների սենեակները, վատ էր կահաւորուած, բայց զարդարուած էր ծաղիկներով։ Շուտով ներս մտաւ նաև ինքը Օդինցեան՝ առաւօտեան պարզ զգեստը հագին։ Գարնան արևի լուսով նա աւելի ևս նորատի էր թուում։ Արկաղիլն Բաղարովին ներկայացրեց նրան և ծածուկ զարմացմամբ նկատեց, որ կարծես Բաղարովը շփոթուեց, մինչդեռ Օդինցեան, երեկուայ նման, բոլորովին հանգիստ էր։ Բաղարովը ինքն էլ զգաց, որ շփոթուեց և ինքը իւր վրայ նեղացաւ։ «Ա՛յ քեզ բան—կնիկարմատից վախեցալ» մտածեց նա և Սիտնիկովի պէս, բազկաթռուի մէջ թինկը տուած նստելով, սկսաւ չափից անց համարձակութեամբ խօսել, իսկ Օդինցեան իւր պարզ աչքերը նրա վրայից չէր հեռացնում։

Աննա Սերգէեանա Օդինցեակի հայրը Սերգէյ Նիկալալիչ Լոկտեն էր, մի հռչակուած գեղեցիկ, խաբեբայ և թղթամուկ մարդ, որ մի տասնհինգ տարի Պետերբուրգում ու Մոսկուայում իւր դիրքը պահպանելուց ու աղմուկ հանելուց լետով վերջ ի վերջով թղթախաղի մէջ ամեն բան տանուկ էր տուել ու

ստիպուած էր եղել բնակութիւն հաստատել գիւղում, որտեղ սակաւն չուտով մեռաւ մի փոքրիկ կալք թողնելով երկու աղջիկներին՝ Աննային, որ՝ քսան տարեկան էր և Վատերինային, որ տասներկու տարեկան էր։ Նրանց մայրը, որ Խ...իշխանական աղքատացած տոհմի աղջիկ էր, մեռել էր Պետերբուրգում ղեռ ալն միջոցին, որ ամուսինը մեծ անուն ունէր։ Հոր մահից լետով շատ ծանր վիճակի մէջ էր մնացել Աննան։ Պետերբուրգում ստացած պատուական կրթութիւնը նրան պատրաստած չէր տնտեսական և կեանքի հոգսերը տանելու և գիւղական խուլ անկիւնում ապրելու։ Ամբողջ դաւառակում չունէր մի մարդ, որից գոնէ խորհուրդ հարցնէր։ Հայրը խոյս էր տալիս հարեանների հետ լարաբերութիւն ունենալուց։ Նա արհամարհում էր նրանց, և նրանք էլ նրան էին արհամարհում, ամեն մէկը իւր տեսակէտով։ Սակաւն Աննան չշուարեցաւ և անմիջապէս բերել տուեց իւր մօրաքրոջը, իշխանագոտսոր Աւդոտեա Ստեփանովնա Խ...ին, մի չար և ինքնահաճ պառաւ, որ քրոջ աղջկալ տանը բնակութիւն հաստատելով, բոլոր ամենալաւ սենեակներն իրեն առաւ. առաւօտից մինչև իրիկուն շարունակ դողովում էր ու փնթփնթում, և մինչև անդամ պարտիզոմնս զրօսնելիս էլ անպատճառ իւր հետն էր վերցնում իւր միակ ճորտ սպասաւորին, որ մօալլ դէմքով մի մարդ էր՝ կապտադոշն երկղաւոր հնացած, սիսեռի գոյն, համազգեստը հագին և եռանկիւն գլխարկը գլխին։ Աննան համեստութեամբ դիմանում էր մօրաքրոջ բոլոր քմաճոքներին, բոլոր ժամանակը զբաղւում էր քրոջ դաստիարակութեամբը և թւում էր, թէ արդէն հաշտուել էր անյալտութեան մէջ թառամելու մշտքի հետ... Բայց բազմը նրան ուրիշ բան էր վիճակել։ Նրան պատահաբար տեսաւ Օդինցև անունով մէկը, քառասուն վեց տարեկան մի խիստ հարուստ, տարօրինակ բնաւորութեան տէր, մաղձոտ, հաստլիկ, ծանր ու թթուած մի մարդ, որը սակաւն լիմար չէր և ոչ էլ չար. սիրահարուեցաւ Աննային և առաջարկեց ամուսնանալ։ Աննան համաձայնեցաւ նրա կինը լինելու, — իսկ նա մի վեց տարի ապրեց Աննայի հետ և մեռնելիս իւր բոլոր կալքը նրան թողեց։ Աննա Սերգէևնան ամուսնու մահից լետով մօտ մի տարի գիւղից չհեռացաւ. լետոյ քրոջը հետ արտասահման գնաց, բայց միմիայն Գերմանիա ապրելից, ձանձրացաւ և գալով բնակեցաւ իւր սիրալիր Նիկոլսկօյ գիւղը, որ *** քաղաքից քառասուն վերստի չափ հեռու

էր գտնուում: Այնտեղ փառահեղ, շատ լաւ կահաւորած տուն ունէր, մի պատուական պարտէզ՝ իւր ջերմանոցով՝ հանգուցեալ Օդինցեր իրեն համար ոչինչ չէր խնայում: Աննա Սերգէննան շատ քիչ էր զալիս քաղաք, մեծ մասամբ դործով, և ահա էլ երկար չէր մնում: Նահանգում նրան չէին սիրում. սաստիկ աղմուկ էին հանում Օդինցերի հետ ամուսնանալու համար, ամեն տեսակ լիմար բաներ էին պատմում վրան, հաւատացնում էին, թէ իւր հօրն օգնելիս է եղել խարեքալական դործերի մէջ, թէ արտասահման գնալն էլ զուր տեղը չէ եղել, հապտ հասարակութիւնից ծածկելու անհրաժեշտութիւնից մի բանի անախորժ հետևանքները... «Բնչ բանի եղածը հօ հասկանում էք» — աւելացնում էին զալրագնած պատմողները: «Աշխարքի խէրն ու շառը տեսած կին է», ասում էին նրա մասին. իսկ նահանգում լալտնի սրախօսն էլ սովորաբար աւելացնում էր. «ու տեւուած»: Այդ բոլոր ասէ-կոսէները հասնում էին նրա ականջին. բաց նա չիմանալու էր տալիս՝ — ազատ և բաւական վճռական բնաւորութեան տէր էր նա:

Օդինցեան մէջքը բաղկաթուղի կռնակին դէմ տուած ու, ձեռքը ձեռքին դրած նստած էր և Բազարովին ականջ դնում: Սա, սովորականին հակառակ, բաւական շատ էր խօսում և լալտնի կերպով աշխատում էր զբաղեցնել իւր խօսակցին. այս բանն էլ զարմացրեց Արկադիին: Նա չէր կարողանում վճռել, թէ արդեօք Բազարովը իւր նպատակին հասնում էր թէ ոչ: Դժուար էր Աննա Սերգէննայի դէմքից հասկանալ, թէ Բնչ-պիսի տպաւորութիւն էր ստանում. նրա դէմքը շարունակ միևնույն արտայայտութիւնն ունէր — բարեհամբոյր ու նուրբ. նորա գեղանի աչքերը ուշադրութիւն էին առիւլում, բաց անվրդով ուշադրութիւն: Սկզբում Բազարովի կոտրատուելը վատ տպաւորութիւն արաւ նրա վրայ, մի անպիսի տպաւորութիւն, որ անում է անախորժ հոտը կամ սուր ճիչը. բաց և իսկոյն հասկացաւ, որ Բազարովը շփոթուած է և ալդ բանը մինչև անգամ նրան գոհութիւն պատճառեց: Սոսկական խօսակցութիւնները Օդինցեակին զգուանք էին պատճառում. իսկ ոչ ոք կարող չէր Բազարովին մեղադրել, թէ սոսկական ձեերի ու մտածմունքի տէր է: Արկադիին ալդ օրը վիճակուած էր շարունակ զարմանալ: Նա սպասում էր, որ Բազարովը կ'սկսի Օդինցեակի հետ, որպէս խելացի կնոջ հետ, խօսել իւր համոզումների ու հալեացքների մասին՝ — չէ որ ինքը Օդինցեան էր

ցանկութիւն լալտնել լսելու մի մարդու, որ «համարձակութիւն ունի ոչ մի բանի չհաւատալու», իսկ զրա փոխարէն Բաղարովը խօսում էր բժշկութեան, հոմէօպատիայի, բուսաբանութեան վրայ, Բանից երևաց, որ Օդինցեան առաձնութեան մէջ զուր ժամավաճառ չէր լինում — նա մի քանի լաւ գրքեր էր կարդացել և կանոնաւոր էլ ռսերէն խօսում։ Նա խօսք ձեռքեց երաժշտութեան վրայ, բայց նկատելով, որ Բաղարովը գեղարուեստ չէ ընդունում, աննկատելի կերպով խօսքը դարձրեց բուսաբանութեան վրայ, չնայելով որ Արկադիին սկսել էր խօսել ժողովրդական մեղեդիների մասին։ Օդինցեան դարձեալ նրա հետ վարւում էր ալնպէս, որպէս կրտսեր եղբոր հետ. ըստ երևութիւն Օդինցեան դնահատում էր նրա պատանեկական բարեսրտութիւնն ու պարզութիւնը — ուրիշ ոչինչ։ Մօտ երեք ժամ տեւեց նրանց անշտապ, բաղմակողմանի և կենդանի զրոյցը։

Բարեկամները վերջապէս վեր կացան տեղներից և սկսան մնաս բարով ասել։ Աննա Սերգէենան հաճութեամբ նախեցաւ նրանց, իւր գեղեցիկ, սպիտակ ձեռքը երկսին էլ մեկնեց և, փոքր ինչ մտածելով, անվճռաբար, բայց բարեմիտ ժպիտով ասաց. «Թէ որ, պարոններ, ձանձրանալուց չէք վախում, եկէք ինձ մօտ, Նիկոլլսկօյն»։

— Ի՛նչ էք ասում, Աննա Սերգէենա, — բացականչեց Արկադիին, — ինձ համար յատուկ բաղդ կ'համարեմ...

— Իսկ դձեք, մաիօ Բաղարով։

Բաղարովը միայն գլուխ տուեց, — և Արկադիին մի վերջին անգամ էլ զարմացաւ — նկատեց, որ բարեկամը կարմրեցաւ։

— Յետո՛յ, — ասում էր նա Բաղարովին փողոցում. — դարձեալ ալն կարծիքին եմ, որ նա ոօօ... է։

— Ո՛վ է իմանում, Տեսնում էիր հօ ինչպէս էր նա ինքն իրեն սառցրել, — պատասխանեց Բաղարովն ու մի քիչ լուռ մնալուց լետոյշարունակեց. — դշխուհի է. թագուհի։ Միայն պակաս է, որ գլխին թագ ունենալ ու մէկ էլ շորի պոչը բռնած ունենան։

— Մեր դշխուհիներն ալդպէս ռսերէն չեն խօսում, — նշկատեց Արկադիին։

— Ինչքան չլինի մեր մէջն է եղել, եղբայր ջան, մեր հացից կերել։

— Բայց և ալնպէս չքնաղ կին է, — ասաց Արկադիին։

— Ի՛նչ մարմին ունի, — շարունակեց Բաղարովը, — Բնչ անդամահատարան տանելու բան է:

— Հերիք է, իսէր Աստուծոյ, Նւզենիլ, ամենեւին բանիւ նման չէ ասածդ:

— Դէ, մի նեղանալ, քնքշիկ, Շատլանէ է, Պէտք է միանգամ նրա դիւղը դնալ:

— Ն՞րբ:

— Թէկուզ հէնց վաղը չէ միւս օր: Այստեղ էլ մի շատ գործ չունենք: Կուկչինալի հետ շամպան պիտի խմենք, Աղականիդ, աղաթամիտ պաշտօնեալին ականջ պիտի դնենք... Հէնց վաղը չէ միւս օր էլ ուղղակի դնանք, Հաղիւր հօրս ազարակըն էլ ալնտեղից հեռու չէ: Նիկօլլսկօյէն հո ***-ի ճամբին է:

— Այո:

— Optime (շատ լաւ). բանը լետացնելու կարիք չկալ. բանը լետացնում են միմիայն անխելքները — մէկ էլ խելօքները: Ասում եմ հա — լաւ մարմին ունի:

Երեք օր լետող երկու ընկերները Նիկօլլսկօյէ էին գնում: Պարծառ օր էր և շատ տաք չէր, և փոստային կուշտ ձիերը, թեթևակի շարժելով կշկած ու հիւսած պոչերը, ուրախ-ուրախ առաջ էին վաղում: Արկադիյն նալում էր ճանապարհին ու ժպտում, ինքն էլ չիմանալով թէ Բնչ բանի:

— Շնորհաւորիր ինձ, — լանկարծ բացականչեց Բաղարովը, — ալսօր լուլիսի 22-ն է, տօնս է: Տեսնենք թէ ս. Նւզենիլն ինչպիսի խնամք է տանում իմ վրաս: Ալսօր ինձ տանն են սպասում, — աւելացրեց նա ձայնը քաջ զցելով... էհ, կ'սպասեն, ինչ եղած կալ որ:

XVI

Աննա Սերգէենայի բնակած ազարանքը շինած էր մի բաց, փոքր ինչ զառիվալր բլրի վրայ, իսկ նրան մօտիկ կառուցած էր դեղին քարաշէն եկեղեցին՝ իւր կանաչ կտուրով, սպիտակ սիւներով և զլխաւոր մուտքի գլխին քաշած *al fresco* նկարով, որ «իտալական ճաշակով» «Քրիստոսի Յարութիւնն» էր ներկայացնում: Մանաւանդ աչքի էր ընկնում առաջին շարքում գետնին փռուած մի գեր ու կլօր թխաներ զինուորական՝ սաղաւարտը գլխին, Նկեղեցու ետեւ ձգուած էին գիւղի երկշար տները, որոնց մէջ յարդեալ կտուրների վրայ տեղ տեղ

երևում էին ծխներլողները, կալուածատիրոջ տունն ու եկեղեցին միևնույն ճաշակով էին շինած, այն ճաշակով, որ Ռուսիայում լատինի է Ալեքսանդրեան անունով, այդ տունն էլ դեղին էր ներկած, կտուրը կանաչ, սպիտակ էլ սիւններ ունէր, իսկ ճակատին էլ տոհմանիշն էր նկարած: Երկու շէնքն էլ նահանգական ճարտարապետն էր կառուցել հանգուցեալ Օդինցեի հաւանութեամբ, որը չէր կարողանում ոչ մի դատարկ և ինքնակամ, ինչպէս ինքն էր ասում, նորմութեւթիւններ տանել: Տունը երկու կողմից պաշարել էին հին պարտեզի մութ ծառերը. խուղած եղևիններից կազմուած ճեմուղին տանում էր դէպի տան զխաւոր մուտքը:

Նախասենեակում մեր բարեկամներին ընդունեցին երկու մեծահասակ, համազգեստ հագած սպասաւորներ. նրանցից մէկն անմիջապէս գնաց սենեկապանին իմաց տալու: Սենեկապանը, որ սև ֆրակ հագած մի հաստ մարդ էր, անմիջապէս եկաւ և հիւրերին գորգածածկ աստիճաններով տարաւ մի առանձին սենեակ, ուր արդէն պատրաստել էին երկու մահճակալ՝ արդու զարդի բոլոր պարագաներով: Ինչպէս երևում էր տան մէջ կարգ ու կանոն կար՝—ամեն բան մաքուր էր, ամեն տեղ մի տեսակ վախուչ հոտ էր փռուած, հէնց իմանաս մինիստրութեան սենեակներում լինէիր:

—Անհա Սերգէնեան խնդրում է որ կէս ժամից շնորհ բերէք իւր մօտ,—լատինեց սենեկապանը. իսկ առ այժմ ասելու բան չունիք:

—Ոչինչ չունինք ասելու, պատուելի,—ասաց Բաղարովը.—մի փոքր բաժակ օղի որ հրամցնէք, չգիտեմ:

—Շատ բարի,—ասաց սենեկապանը փոքր ինչ զարմացած և, կօշիկները ճրճացնելով, հեռացաւ գնաց:

—Ի՞նչ գրաւօթանք (փարթամ) է,—նկատեց Բաղարովը.—կարծեմ ալդպէս է ձեր լեզուով: Իսկը դժխոյ է:

—Լաւ դժխոյ է,—պատասխանեց Արկադիւն,—որ հէնց առաջին անգամից իւր մօտ հրաւիրեց այնպիսի թունդ աղնուականների, ինչպէս ես ու դու ենք:

—Մասաւանդ ես, որ ապագայ բժիշկ եմ, և բժշկի որդի, արիացուի թող... Գիտես որ ես արիացուի թող եմ...:

—Ինչպէս Սպերանսկին,—աւելացրեց Բաղարովը փոքր ինչ լռելուց լեռով ու շրթունքները ծռելով.—Բայց և այնպէս

շատ փարթամ կեանք է ստեղծել այս տիկինը, մէ, շատ փարթամ Արդեօք մենք էլ ֆրակ չհագնենք:

Արկաղիլն միայն ուսերը վեր զցեց... բայց նա էլ էր փոքր ինչ շփոթուած:

Կէս ժամից Բաղարովն ու Արկաղիլն ընդունարան գնացին: Սա մի ընդարձակ, բարձր սենեակ էր, որը թէպէտ բաւական չքեղ էր կահաւորուած, բայց մէջը մի առանձին ճաշակ չէր երևում: Մանր, թանկ գնանոց աթոռներն ու սեղանները սովորական վեհ կերպով դարձած էին պատերի երկանքով, պատերին կայքած էր դարչնագոյն ոսկեղօծ նկարներով պատառ. հանգուցեալ Օդինցեն այդ պատառը լատով բերել էր տուել Մոսկուայից իւր մի բարեկամ գինեվաճառի ձեռքով, որ միենչին ժամանակ միջնորդի դեր էր կատարում: Միջին դահաւորակի վերեւ պատից կախ էր արած մի տոգած, խարտեաշ տղամարդու պատկեր, որ կարծես անբարեմիտ կերպով նայում էր հիւրերին: «Նրեի լնքն է» շնչաց Բաղարովը Արկաղիլին և, քիթը կնճռոտելով, աւելացրեց. «չփախնէ»: Բայց այդ միջոցին ներս մտաւ տան տիկինը. Նա հագած էր բարեփեան թեթև դիպակեալ զգեստ. զէպի ականջների ետեւ կարդին սանրած մազերը նրա մաքուր ու թարմ զէմքին կուտական արտալատութիւն էին տալիս:

—Շնորհակալ եմ, որ խօսքերդ կատարեցիք,—սկսեց տիկինը.—մնացէք ինձ մօտ և հաւատացէք, որ վատ տեղ չէ սա: Ձեզ կ'ծանօթացնեմ քրոջս հետ. նա լաւ դաշնամուր է նուագում: Ասենք այդ ձեզ համար, մսիօ Բաղարով, նշանակութիւն չունի. բայց դուք, մսիօ Կիրսանով, կարծեմ երաժշտութիւն սիրում էք. իմ մօտ բացի քրոջիցս կենում է նաև պառաւ մօրաքոյրս, մէկ էլ երբեմն-երբեմն թուղթ խաղալու գալիս է հարեաններիցս մի պարոն—ահա մեր բոլոր հասարակութիւնը: Իսկ այժմս նստենք:

Օդինցեան այս փոքրիկ ճառը ծալրից մինչև վերջը մեկին-մեկին արտասանեց, ասես թէ անգիր արած լինէր. լատով դարձաւ զէպի Արկաղիլն: Բանից երևաց, որ իւր մալրը ճանաչելիս է եղել Արկաղիլի մօրը և մինչև անգամ նրա սիրող հաւատարմատարն է եղել զէպի Նիկալայ Պետրովիչը: Արկաղիլն սկսաւ ողնորոթեամբ խօսել հանգուցեալի մասին. իսկ Բաղարովն այդ միջոցին սկսաւ ալլոմը թերթել. «Ինչպէս խելօքացել եմ» մտածում էր նա ինքն իրեն:

Այդ միջոցին մի գեղեցիկ քերծէ, կապուտ վզնոցը վզին, նշուղներովը դետինը չխչխկացնելով վազեց եկաւ ընդունաւրան. իսկ նրա ետեից մտաւ մի տասնութ տարեկան, սև մազերով, թուլ, փոքր ինչ կլոր, բայց հաճելի դէմքով, մանր սև աչքերով աղջիկ. Նա ձեռին ծաղիկներով լի կողով ունէր:

—Ահաւասիկ ձեզ և իմ կատեան,—ասաց Օդինցեան՝ զըլխով քրոջը ցոյց տալով:

կատեան թեթևակի ներքև քաշուելով բարեց, նստաւ քրոջ կողքին ու սկսաւ ծաղիկները ջոկել. Գերծէն, որի անունը Ֆիֆի էր, սույն շարժելով մօտ եկաւ երկու բարեկամներին և իւր սառը ցոռկովը հերթով բոթեց նրանց ձեռքը:

—Այս բոլորը քո քաղածդ է,—հարցրեց Օդինցեան:

—Այո,—պատասխանեց կատեան:

—Իսկ մօրաքույրը թէլի պիտի գնայ:

—Պիտի գայ:

կատեան խօսելիս շատ քաղցր ժպիտ ունէր—ամօթխած ու անկեղծ, իսկ նայուածքը—ներքևից վերև—ծիծաղելի-դաժան էր թւում. Նրա վրայ ամեն ինչ էլ դեռ ևս կանաչ-դարուն էր՝ ձալնն էլ, ամբողջ երեսի աղուամազն էլ, վարդադոն ձեռները՝ բոսն միջի սպիտակաւուն բոլորակներով, և թեթևակի հուպ եկած ուսերն էլ...: Նա շարունակ կարմրում էր ու արագապէս շունչ առնում:

Օդինցեան դէպի Բաղարովը դարձաւ:

—Եւզենիլ վասիլիչ,—սկսեց նա,—դուք միմիւրն վախել-չութեան համար է, որ թերթում էք այլքում: Մինչդեռ դա ձեզ չի հետաքրքրում: Աւելի լաւ է մօտեցէք մեզ և եկէք մի բանի վրայ վիճենք: Բաղարովը մօտ եկաւ:

—Ի՞նչ բանի վրայ կ'հաճիք,—ասաց նա:

—Ինչ բանի վրայ որ ուզէք:—Զգուշացնեմ, որ ես սաստիկ վիճող եմ:

—Դուք:

—Ես: Կարծեմ այդ բանը ձեզ զարմացնում է: Ինչո՞ւ:

—Նրա համար որ, ինչքան կարող եմ դատել, դուք հոն-դարտ ու սառը բնաւորութիւն ունիք, իսկ վիճելու համար պէտք է լուզուել, լափշտակուել:

—Այդ որտեղից էք կարողացել ինձ այդպէս շուտով ճանաչել: Նախ որ ես անհամբեր եմ և լամառ. կուզէք կատեանին հարցրէք. և երկրորդ՝ ես շատ շուտ եմ լափշտակում:

Բաղարովը Աննա Սերգէնային նայեցաւ:

—Գուցէ, արդ բանը դուք աւելի լաւ կ'իմանաք: Ուրեմն վիճել էք ուղղում—համեցէք: Սո ձեր արբումի մէջ նախում էի սակսոնական զուլիցերիայի տեսարանները, և դուք ասացիք, թէ արդ բանը կարող չէ ինձ գրաւել: Դուք արդ ասացիք աչն պատճառով, որ չէք ենթադրում, թէ իմ մէջս զեղարուեստական հասկացողութիւն լինի,—ուղիղ է, իմ մէջս արդ բանը չկալ, բայց այս տեսարանները ինձ կարող էին հետաքրքրել օրինակ երկրաբանութեան տեսակէտից, լեռների կազմակերպութեան տեսակէտից:

—Ներեցէք, դուք որպէս երկրաբան աւելի գրքի, լատով արդ առարկային վերաբերեալ գրքի կ'զիմէիք և ոչ թէ պատկերի:

—Պատկերն ինձ շօշափելի կերպով ներկայացնում է աչն, ինչ որ գրքի մէջ տասը երեսի վրայ է նկարագրած:

Աննա Սերգէնայն լուռ մնաց:

—Ուրեմն դուք ոչ մի կաթիլ զեղարուեստական հասկացողութիւն չունիք էլի,—ասաց նա արմունկովը սեղանին կոթնակով, և այս շարժումով իւր դէմքը Բաղարովին մօտեցնելով:—Այդ թնչպէս էք կարողանում առանց դրան եօլա դնալ:

—Սէ ինչիս է դա, թող տուէք հարցնեմ:

—Հէնց ասենք աչն բանի համար, որ կարողանաք մարդկանց ճանաչել և ուսումնասիրել:

Բաղարովը քմծիծաղեց:

—Նախ որ դրա համար կեանքի փորձ կալ. իսկ երկրորդ էլ չարժէ ամեն մի անհատի ջոկ-ջոկ ուսումնասիրել: Բոլոր մարդիկ, ինչպէս մարմնով, աչնպէս էլ հոգով, նման են միմեանց. ամեն մէկս էլ ունինք ուղեղ, փալծաղ, սիրտ, թոք, որոնք միատեսակ են կազմուած. և աչնպէս կոչուած բարոյական լատկութիւններն էլ ամենքի մէջ միևնորն են՝—չնչին փոփոխութիւնները նշանակութիւն չունին: Մի անհատն էլ բաւական է որպէսզի կարող լինինք դատել բոլոր մնացեալների մասին: Հա մարդիկ, հա անտառի ծառերը, մէկ բան են. ոչ մի բուսաբան չի սկսիլ ամեն սի կեչի ծառը ջոկ-ջոկ ուսումնասիրել:

Կատեան, որ առանց շտապելու ծաղիկները ջոկում էր տեսակը տեսակին, տարակուսած՝ աչքը Բաղարովի վրայ ձգեց, — և նրա արագ ու անհոգ հայեացքին հանդիպելով, մինչև ա-

Վանքի արմատները կարմրեցաւ: Աննա Սերգէնյան գլուխը շարժեց...

—Անտառի ծառերը՝—կրկնեց նա:—Ուրեմն ձեր կարծիքով ոչինչ տարբերութիւն չկալ անխելք և խելօք, չար և բարի մարդկանց մէջ:

—Ոչ, կալ՝ ինչպէս հիւանդ և առողջ մարդու մէջ, Թոքախտաւորի թոքերը անպէս չեն իհարկէ, ինչպէս որ են իմ ու ձեր թոքերը, թէպէտ և միատեսակ կազմութիւն ունին: Մենք մօտաւորապէս գիտենք, թէ ինչից են առաջանում մարմնական ցաւերը՝ իսկ բարոյական ցաւերն առաջանում են վատ դաստիարակութիւնից, ամեն տեսակ դատարկ բաներից, որ մանկութիւնից լցնում են մարդկանց գլուխները, մէկ խօսքով հասարակութեան անբարոյական գրգռութիւնից: Ուղղեցէք հասարակութիւնը—և հիւանդութիւնները կ'վերանան:

Բազարովն այս ամենը մի աջնալիսի ձեռով էր ասում, որ կարծես թէ միևնորն ժամանակ էլ ինքն իրեն մտածելիս լինէր. «ինձ համար մէկ բան. ուզում ես հաւատն, ուզում ես՝ չէ»: Նա իւր երկաթն մատներով չփում էր արմօրուսը, իսկ աչքերը սենեակի անկիւններն էր վազվզում:

—Եւ կարծում էք,—ասաց Աննա Սերգէնյան, —թէ երբ որ հասարակութիւնն ուղղուի, էլ ոչ անխելք մարդիկ կ'լինեն, ոչ էլ չար մարդիկ:

—Գոնէ եթէ հասարակութիւնը կանոնաւոր կերպով կազմակերպուած լինի, այն ժամանակ բոլորովին նշանակութիւն չի ունենալ, թէ մարդս անխելք է թէ խելօք, չար է թէ բարի:

—Այո, հասկանում եմ. ամէնքն էլ միատեսակ փաթաղ կ'ունենան:

—Հէնց արդպէս էլ է, տիկինս:

Օղիւնցեան դէպի Արկադիին դարձաւ:

—Իսկ ձեր կարծիքն ինչպէս է, Արկադիյ Նիկալայիչ:

—Ես եւզէնիլին համաձայն եմ,—պատասխանեց նա:

Կատեան ճակատի տակից նրան նայեցաւ:

—Պարոններ, դուք ինձ զարմացնում էք,—ասաց Օղիւնցեան.—բայց մենք դեռ կ'խօսենք: Իսկ այժմս, լռում եմ, մօրաքօրս թէլ խմելու է գալիս. պէտք է խնայենք նրա ականջները:

Աննա Սերգէնյանի մօրաքօրը, իշխանադուստր X...ը, որ մի վտիս, փոքրիկ, բուռնցքի մեծութեամբ հուպ եկած դէմ-

քով և անշարժ, ալևոր լոնքերի տակից փալլող չար աչքերով պառաւ էր, ներս մտաւ և, հիւրերին հազիւ բարևելով, նստաւ թաւշապատ լալն բազկաթոռի մէջ, ուր նրանից դատ, ոչ ոք իրաւունք չունէր նստելու։ Կատեան փոքրիկ աթոռակը դրեց նրա ոտների տակը։ պառաւը նրան շնորհակալութիւն չցատնեց, մինչև անգամ վրան էլ չնայեցաւ, միայն դեղին շալի տակ, որը համարեա թէ ամբողջ վտիտ մարմինը ծածկած էր, ձեռները շարժեց։ Նա դեղին գոյնը սիրում էր՝—նրա գլխադարդի վրան էլ պայծառ դեղին գոյնի ժապաւէններ կալին։

—Ինչպէս էիք գիշերս, մօրաքորը,—ձայնը բարձրացնելով հարցրեց Օդինցեան։

—Այս շունը դարձեալ այստեղ է,—իպատասխանի քրթմնջաց պառաւը, և նկատելով, որ Ֆիֆին երկու անհաստատ քալլ արեց դէպի իրեն, բացականչեց,—կորի, կորի։

Կատեան Ֆիֆիին կանչեց և բաց արաւ դուռը։

Ֆիֆին ուրախ-ուրախ դուրս թաւ լուսալով, որ դռսնելու են գնալու, բաց դրան քամակին մենակ մնալով, սկսաւ դուռը չանկուտել ու ոռնալ։ Իշխանունին խոփոռեցաւ, Կատեան ուզում էր տեղիցը վերկենալ....

—Կարծում եմ թէլը պատրանտ կ'լինի,—ասաց Օդինցեան։—Գնանք, պարոններ, Համեցէք թէլ անուշ անելու, մօրաքորը։

Իշխանունին լուռ ու մունջ տեղիցը վերկացաւ և առաջ ինքը դուրս եկաւ ընդունարանից։ Ամենքն էլ նրա ետևից սեղանատուն գնացին։ Ղազախի շորեր հագած սպասաւորը աղմուկով սեղանից հեռացրեց բարձերով պատած, նոյնպէս նուիրական, բազկաթոռը, որի մէջ նստեց իշխանունին։ Կատեան, որ թէլ էր անում, առաջ նրան տուեց գաւաթը, որի վրայ տոհմանիչն էր դրոշմուած։ Պառաւը գաւաթի մէջ մեղրածեց (նա կարծում էր, որ թէլը շաքարով խմելը թէ մեղր է և թէ թանկ է նստում, թէպէտ և ինքը ոչ մի բանի համար ոչ մի կոպէկ չէր մսխում), և լանկարծ խոպոտ ձայնով հարցրեց։

—Ի՞նչ է գրում իշխան Իւանը։

Ոչ ոք պատասխան չտուեց։ Բազարովն ու Արկադիին շուտով գլխի ընկան, որ նրա վրայ ուշադրութիւն չէին դարձնում, թէպէտ և հետը լարզանքով էին վարում։ Հէնց այնպէս, շնորքի խաթեր համար են պահում, որովհետև իշխանական արևնից է՞, մտածեց Բազարովը... թէից լստոյ Աննա-

Սերգէննան առաջարկեց զըօսնելու գնալ. բայց սկսաւ անձրև շողալ և բոլոր հասարակութիւնը, բացի իշխանուհուց ընդունարան վերադարձաւ. Սկաւ նաև թղթախաղի սիրահար հարևանը, Պորֆիրիյ Պլատոնիչ անուշով, մի հաստ ու ալևոր մարդ, կարճ, հէնց իմանաս լեւանած ոտներով, խիստ քաղաքավարի և ծաղրածու. Աննա Սերգէննան, որ աւելի Բազարովի հետ էր խօսում, հարցրեց, թէ արդեօք չի ուզիլ ըստ հնաւուրց սովորութեան պրոֆերանս խաղալ. Բազարովը համաձայնեցաւ ասելով, թէ հարկաւոր է որ նախօրօք պատրաստուի առաջիկայում ստանձնելիք դաւառական բժշկի դերը կատարելու:

— Զորլը կացէք,— նկատեց Աննա Սերգէննան,— տեսէք ես ու Պորֆիրիյ Պլատոնիչը ձեզ կ'ջարդենք: Իսկ դու, Կատեա,— աւելացրեց նա,— Արկադիյ Նիկալայիչի համար մի բան ածա. նա երաժշտութիւն սիրում է. մենք էլ, իդէպ, կ'լսենք:

Կատեան առանց հաճութեան մօտեցաւ դաշնամուրին. Արկադիյն էլ թէպէտ արդարև երաժշտութիւն սիրում էր, նոյնպէս առանց հաճութեան գնաց նրա ետևից՝— նրան թուաց, թէ Օդինցեան զլխից ռադ է անում իրեն,— մինչդեռ արդէն նրա սրտի մէջ, ինչպէս նրա տարիքն ունեցող ամեն մի երիտասարդի մէջ, եռ էր զալիս մի տեսակ անմեկին ու անհանգստացնող, սիրող նախազգացման պէս մի զգացողութիւն: Կատեան բաց արաւ դաշնամուրի խուփը և առանց Արկադիի վրայ նայելու, ցած ձայնով ասաց.

— Ի՞նչ կուզէք, որ ածեմ:

— Ինչ որ սրտներդ կուզի,— անտարբեր եղանակով պատասխանեց Արկադիին:

— Աւելի ի՞նչ տեսակ երաժշտութիւն էք սիրում,— կըրկնեց Կատեան առանց իւր դիրքը փոխելու:

— Կլասիկ,— միևնոյն ձայնով պատասխանեց Արկադիին:

— Մոցարտ սիրո՞ւմ էք:

— Մոցարտ սիրում եմ:

Կատեան հանեց Մոցարտի ցէ-մոլ սոնատ-անուրջը. Նաշատ լաւ էր նուազում, թէպէտ և նուազածը փոքր ինչ չոր ու ցամաք էր: Առանց աչքը ձայնախաղերից հեռացնելու, չըրթունքները պինդ հուպ տուած, անշարժ և ուղիղ նստել էր նա, և միայն սոնատի վերջերքում դէմքը փոքր ինչ վառուեց:

և արձակուած մազերի մի փոքրիկ խոպոպ ընկաւ սև լոնքի վրայ:

Արկաղիլի վրայ մանաւանդ աւելի աղդեց սոնատի վերջին մասը, ալն մասը, ուր անհոգ նուագի զմայլելի զուարթութեան միջև լանկարծ ծաղում են խիստ թախծալի, համարեա եղերալին վշտի բորբոքումները...

Բայց Մոցարտի ներգործութիւնից նրա մէջ առաջացած մտքերը կատեալի վերաբերմամբ չէին: Արկաղիլն նրան մտիկ տալով միայն այն էր մտածում. «Ձէ, այս աղջիկը վատ չի ածում, ինքն էլ վատ չէ»:

Կատեան սոնատն ածել, վերջացնելուց լետու, առանց ձեռքը ստեղծներից հեռացնելու, հարցրեց. «բաւական է»: Արկաղիլն լայնեց, որ չի համարձակուած նրան աւելի նեղութիւն տալ, և սկսաւ Մոցարտի վրայ խօսել. նրան հարցրեց, թէ ինքն էր ալդ սոնատը հաւանել, թէ ուրիշի առաջարկածն էր: Բայց Կատեան միայն ալուկամ ոչ էր ասում—նա իւր մէջը քաշուել, թաք էր կացել: Աղալիսի միջոցին նա մէկ էլ հեշտութեամբ դուրս չէր գալիս. ալդ ժամանակ նրա դէմքն էլ լամաւ, համարեա լուծ արտալատութիւն էր ստանում: Նա չէ թէ քաշուող էր, հապա կասկածամիտ էր և իրեն դաստիարակող քրոջիցը աչքը փոքր ինչ վախեցել էր, մի բան, որ Աննա Սերգէնայի մտքովն անգամ չէր անցնում: Արկաղիլն վերջ ի վերջոյ մօտ կանչելով Ֆիֆիին, որ ներս էր եկել, սկսաւ շնորքի համար չփել նրա գլուխը: Կատեան նորից իւր ծաղիկները սկսաւ ջոկել:

Իսկ ալդ միջոցին Բազարովը իրար ետեից մտնում էր հա մտնում: Աննա Սերգէնայն շատ վարպետ էր խաղում, Պորֆիրի Պլատոնիչն էլ ամօթով մնացողը չէր: Բազարովը տանու տուեց թէպէտ քիչ, բայց և այնպէս նրա համար զգալի բան: Ընթրիքի ժամանակ Աննա Սերգէնայն դարձեալ բուսաբանութեան վրայ խօսք բաց արեց:

—Վաղը առաւօտեան եկէք դըստանքի դնանք. — ասաց նա Բազարովին.— ուզում եմ ձեզանից իմանալ դաշտալին ծաղիկների լատիներէն անուններն և նրանց լատիկութիւնները:

—Ինչերիդ է լատիներէն անունները,— հարցրեց Բազարովը:

—Ամեն բանի մէջ կարգ կանոն պէտք է,—պատասխանեց տիկինը:

—Ի՞նչ հրաշալի կին է եղել արդ Աննա Սերգէնեան,—բացականչեց Արկադիլն, երբ որ իւր բարեկամի հետ մենակ մնաց իրենց լատկացրած սենեակում:

—Այո,—պատասխանեց Բաղարովը,—խելքը զլխին կին է: Ով է իմանում ինչեր է տեսել:

—Այդ ինչ մտքով ես ասում, Եւգենիյ Վասիլիչ:

—Լաւ մտքով, լաւ, լարգելի պարոնիկս, Արկադիլ Նիկալալիչ, Հաւատացած եմ, որ նա իւր կալուածքն էլ լաւ է կառավարում: Բայց հրաշալին նա չէ—հապա քողրը:

—Ի՞նչ, արդ թուխ աղջիկը:

—Այո, արդ թուխ աղջիկը: Գիտես որ գոնէ թարմ է, ձեռք տուած չէ, և վեհերկոտ է, և լուակեաց, և ամեն բան, ինչ որ ուզես: Ա՛յ, ում հետ արժի զբաղուել: Նրան ինչ որ ուզես, աչն կ'դարձնես. մինչդեռ միւսը—եկն անցած խմոր է:

Արկադիլն ոչինչ չպատասխանեց Բաղարովին, և իւրաքանչիւրը իւր ջուկ մտքերով պառկեցան քնելու:

Միևնոյն իրիկունը Աննա Սերգէնեան էլ մտածում էր հիւրերի մասին: Բաղարովը նրան դիւր էր եկել իւր կտորակ դատողութեամբ և կոտրատուելու սովորութիւն չունենալու համար: Բաղարովը նրա համար մի նոր, դեռ իրեն չհանդիպած, բան էր, իսկ նա հետաքրքիր ընաւորութիւն ունէր:

Աննա Սերգէնեան բաւական տարօրինակ կին էր: Նա ազատ լինելով որևէ նախապաշարմունքից, չունենալով նաև մի որ և իցէ զօրեղ հաւատալիք, միևնոյն ժամանակ ոչ մի բանի առաջ տեղի չէր տալիս և ոչ մի տեղ էլ չէր գնում: Շատ բան նա պարզ տեսնում էր, շատ բան էլ զբաղեցնում էր ներան, բայց և ոչ մի բան լիովին չէր գոհացնում նրան. և դժուար թէ նա լիովին գոհացումն ուզէր էլ: Նորա միտքը միաժամանակ և հետախող էր և անտարբեր—նրա տարակուսանքները երբէք մինչև մոռացութեան աստիճանի չէին խաղաղում և երբէք էլ մինչև լուզմունքի աստիճանի չէին աճում: Թէ որ հարուստ և անկախ չլինէր, գուցէ մտնէր կռուի մէջ, իմանար ինչ բան է կիրքը... Բայց նրա կեանքը թեթև էր, չնայելով որ երբևէն ձանձրուլթ էր զգում, և նա առանց շտապելու, հաշիւ երբեմն միայն լուզուելով, օրերն անց էր կացնում իրար

ետեից, Երբեմն նրա աչքի առաջն էլ բարոքութեամբ էին պալ-
ծառ գտնուել, բայց երբ որ դրանք մարում էին, նա հանդստա-
նում էր և երբեք չէր ամսոսում դրանց վրայ: Մինչև անգամ
նրա երևակալութիւնը թռչում անցնում էր ամբ սահմանից
դուրս, որ սովորական բարոյականի օրէքներով թուլատրելի էր
համարւում, բայց այդ ժամանակ էլ նրա արիւնը խաղաղ հո-
սում էր նրա դմալեւի—վալեւչակաղմ և խաղաղ մարմնի մէջ:
Երբեմն որ տաքացած ու քնքշացած դուրս էր գալիս անուշա-
բուր լողարանից, կ'կսէր անուրջներէ մէջ ընկնել մտածելով՝
կեանքի ունալնութեան, վշտի, աշխատանքի և չարիքի մա-
սին... Հոգին կ'լցուէր լանկարծական համարձակութեամբ, կը
եռար ազնիւ ձգտումով, բայց հէնց որ կ'իսաբաց պատուհանից
կ'փչէր թափանցող քամին, Աննա Սերդէկնան բոլորովին կուչ-
եկած կ'սկսէր դանդատուել և համարեա զարբանալ, և այդ բո-
ւոյն նրան միայն մի բան էր պէտք—որ այդ անպիտան քա-
մին չփչէ:

Ինչպէս և ամեն մի կին, որ զեռ չէ կարողացել սէր ձա-
շակել, Աննա Սերդէկնան էլ մի բան էր ուզում, բայց թէ ինչ
ինքն էլ չէր իմանում: Իսկապէս նա ոչինչ չէր ուզում, թէ-
պէտ և իրեն թւում էր, թէ ամեն բան է ուզում: Հանդուցեալ
Օդինցեկին նա ղոթարութեամբ էր հանդուրժում (նա հաշտով
էր Օդինցեկին դնացել, թէպէտ և նա, հաւանօրէն, չէր համա-
ձայնիլ նրան զնալու, թէ որ Օդինցեկին բարի մտադ չհամա-
րէր) և զաղտնի զզուանք տածեց դէպի բոլոր տղամարդիկն
էլ, որոնց նա երևակայում էր որպէս փնթի, ծանր և դան-
դաղկոտ, անզօր տաղտկացուցիչ էակներ: Մի անգամ արտա-
սահմանում մի տեղ հանդիպել էր ասպետական դէմքով, բաց
ձակատի տակից փալտող ազնիւ, կապուտ աչքերով մի երիտա-
սարդ, զեղեցիկ շուեղացու: Երիտասարդը զօրեղ տպաւորու-
թիւն էր գործել նրա վրայ, բայց այդ բանը նրան արդեւ չե-
ղաւ Ռուսիա վերադառնալու:

«Տարօրինակ մարդ է այս բժիշկը» մտածում էր Աննա
Սերդէկնան փառահեղ անկողնի մէջ պառկած, ժանեկաւոր
բարձերը գլխի տակին և մետաքսեալ թեթև վերմակը վրան
առած... Նա իւր հօրից ժառանգել էր հօր դէպի շքեղութիւն
ուռնեցած հակման մի մասը: Նա խիստ սիրում էր իւր մեղսա-
գործ, բայց բարի հօրը, իսկ հայրն էլ պաշտում էր իւր աղջ-
կանը և որպէս իրեն հաւասարի հետ բարեկամաբար հանաք-

ներ էր անում հետը, լիովին վստահանում էր նրան, հետը խորհուրդ անում: Նա իւր մօրը հաղիւ էր լիշում:

«Տարօրինակ մարդ է ալս բժիշկը» կրկնեց նա ինքն իրեն: Նա ձղուեցաւ-մեկնուեցաւ, ժպտաց, ձեռները գլխի վերեւը զցեց, լետու աչքի անցկացրեց մի Ֆրանսիական լիմար վէպից մի երկու թերթ, դիրքը ձեռքիցը վալը զցեց—և, բոլորովին մաքուր ու սառն, քնեց մաքուր ու քաղցրաբուր սպիտակեղէնի մէջ:

Միւս օր առաւօտեան նախաճաշիկից անմիջապէս լետու Աննա Սերգէենան ու Բաղարովը գնացին բուսաբանութեամբ պարապելու և վերադարձան իսկը ճաշից առաջ: Արկադիին ոչ մի տեղ չգնաց և մի ժամի չափ Կատեալի հետ անցկացրեց, Նա Կատեալի մօտ չձանձրացաւ, Կատեան ինքն առաջարկեց երէկուալ սոնատը կրկնել, բայց երբ որ վերջապէս Օդինցեան վերադարձաւ, երբ որ Արկադիին տեսաւ նրան—նոյն բուպէին սիրտը ճմլուեցաւ... Օդինցեան փոքր ինչ լոգնած քալլ երով էր առաջանում. ալտերը կարմրել էին, աչքերը, լարդեալ գլխարկի տակ, սովորականից աւելի փալլում: Նա մատների արանքում պտույտ էր ածում մի վալի ծաղկի ձողունը, թեթեւ կրկնոցակը իջել էր արմուկների վրայ, և փեղուրի լալն մոխրագոյն ժապաւէնները կպել էին կրծքին: Բաղարովը ինքնավստահ և իւր սովորական անհոգ քալլուածքով հետևում էր նրան, բայց նրա դէմքի զուարթ և մինչև անդամ փաղաքուշ արտաբերութիւնը Արկադիին դիւր չեկաւ: Բաղարովը ատամների արանքով «բարև» ասելով գնաց սենեակը, իսկ Օդինցեան մտամոլոր կերպով հուպ տուեց Արկադիի ձեռքն ու նոյնպէս անցաւ գնաց:

«Բարև», մտածեց Արկադիին... «Միթէ ալսօր չէինք տեսնուել»:

XVII

Ժամանակը, (ինչպէս լատինի է), երբեմն թռչում է թռչունի նման, իսկ երբեմն սող է տալիս սողունի պէս. բայց մարդու համար շատ լաւ է լինում մանաւանդ ալն ժամանակ, երբ մինչև անդամ չի էլ զգում—չհետ է անցնում ժամանակը թէ դանդաղ: Բաղարովն ու Արկադիին էլ հէնց ալդպէս անցկացրին մի տասնհինգ օր Օդինցեալի տանը: Այդ բանին մասամբ նպաստում էր ալն կարգ ու կանոնը, որ Օդինցեան մոցրեւ էր

տան ու կենցաղավարութեան մէջ, Նա ճշտութեամբ պահպանում էր այդ կարգ ու կանոնը և ուրիշներին էլ ստիպում նորոն անելու: Օրուայ ընթացքում ամեն բան իւր ժամանակին էր կատարում: Առաւօտեան ժամը ուղիղ ութին ամենքը հաւաքւում էին թէլ խմելու, թէլից լետոյ մինչև նախաճաշիկ իւրաքանչիւր ոք ինչ ուղէր, այն կանէր. տանտիկինն ինքը զբաղւում էր գործակատարի (կալուածքը վարձով—բա՜րով—էր տրուած), սենեակապանների, տնտեսուհիների հետ ձաշից առաջ զարձեալ բոլորեքեան հաւաքւում էին զրոյց անելու կամ ընթերցանութեամբ պարապելու համար, երեկոն նուիրուած էր զրօսանքի, երաժշտութեան, թղթախաղի. ժամը տանն ու կէսին Աննա Սերգէնեան քաշւում էր իւր սենեակը, լաջորդ օրուայ համար կարգադրութիւններ անում և անկողին մտնում: Այս ամենօրեայ կեանքի չափած-ձեւած, փոքր ինչ հանդիսաւոր կանոնաւորութիւնը Բաղարովին դիւր չէր գալիս. «հէնց իմանաս սլլւում ես» ասում էր նա՝—համազգեստ հաղած սպասաւորները, կազմ-պատրաստ կանգնած սենեկապանները վիրաւորում էին նրա ռամկավարական զգացմունքը, Նրա կարծիքով թէ որ բանն ալդտիղ է հասել, ապա ուրեմն պէտք էր անգլիական ձևով էլ ճաշէին, ալսինքն ֆրակով ու սպիտակ փողպատով: Նա մի անգամ այդ մասին խօսեց Աննա Սերգէնեայի հետ: Սա իրեն ախպէս էր պահում, որ ամեն մէկն էլ առանց քաշուելու կարող էր նրա առաջ իւր կարծիքները լալտնել: Օղինցեան լսեց նրա ասածներն ու պատասխանեց. «Ձեր տեսակէտից ձեր ասածն ուղիղ է—և, գուցէ այս դէպքում իմ արածս—խանութիւն է. բայց գիւղում կարելի չէ առանց կարգ ու կանոնի ապրել, ձանձրոյթից մարդ կ'մեռնի»—և շարունակում էր իւր ուղածին պէս անել: Բաղարովը քթմնջւում էր, բայց հէնց թէ իրեն և թէ Արկադիլի համար ժամանակն ալդպէս թեթև անցնելու պատճառն ախ էր, որ Օղինցեայի տանն ամեն բան «հէնց գիտենաս սլլւում է»: Բայց և ախպէս հէնց Նիկօլսկօյէ գալու օրուանից երկու երիտասարդների մէջ էլ փոփոխութիւն էր առաջացել: Բաղարովի մէջ, դէպի որը Աննա Սերգէնեան ակնլալտի կերպով բարեհաճ էր, թէպէտ քիչ էր պատահում, որ նրան համակարծիք լինէր, սկսաւ երևան գալ մի ներքին վրդովմունք, որ առաջ չկար՝—շուտով զրգուում էր, խօսում էր ակամայ, նալուածքը բարկացկոտ էր, և մի տեղ հանգիստ նստել չէր կարողանում, կարծես ասեղի վրայ նստած լինէր. իսկ Արկադիին, որ բոլորովին ինքը իւր

մէջ վճռել էր, թէ սիրահարուած է Օդինցեակին, սկսեց խաղաղ թախծութեան անձատուր լինել։ Սակայն այս թախծը նրան արդելք չեղաւ։ Կատեակին մօտենալու դա նոյն իսկ ներան նպատեց քաղցր, բարեկամական կապ հաստատելու Կատեակի հետ։ «Նա ինձ չի գնահատում։ Հոգ չէ... Բայց ահա այս բարի էակը ինձ չի մերժում», մտածում էր նա և նրա հոգին վերստին ճաշակում էր վեհանձնութեան զգացողութեան քաղցրութիւնը։ Կատեան անմեկին կերպով զգում էր, որ Արկադիին իւր մօտ մի ինչ որ սփոփանք է որոնում, ո՛չ նրան և ո՛չ էլ իրեն չէր մերժում կէսամօթխած, կիսավստահ բարեկամութեան հաճոյքը պատճառել։ Աննա Սերգէենայի ներկայութեանը նրանք իրար հետ չէին խօսում՝ Կատեան քրոջ սուր հայեացքից միշտ կուչ էր գալիս, իսկ Արկադիին, ինչպէս որ իսկ վախել է սիրահարուած մարդուս, կարող չէր ուշադրութիւն դարձնել ոչ մի ուրիշ բանի վրայ, քանի որ իւր սիրող առարկան մօտիկ էր. բայց նա իրեն միայն Կատեակի հետ էր լաւ զգում։ Նա զգում էր, որ անկարող էր Օդինցեակին զբաղեցնել. երբ որ նրա հետ մենակ էր մնում, Արկադիին թուլանում էր, չլկլում։ Օդինցեան էլ նոյնպէս չէր իմանում, թէ ինչ ասէր նրան—Արկադիին դեռ շատ երիտասարդ էր նրա համար։ Մինչդեռ Կատեակի հետ Արկադիին բոլորովին աղատ էր. նա ներողամտաբար էր վերաբերւում դէպի Կատեան, չէր արգելում նրան արտայայտելու իւր տպաւորութիւնները, որ երաժշտութիւնը, կարդացած վիպակը, ոտանաւորը և ուրիշ դատարկ բաներ առաջացնում էին նրա մէջ՝ առանց նկատելու, որ այդ դատարկ բաները իրեն, Արկադիին էլ էին զբաղեցնում։ Իսկ Կատեան էլ իւր կողմից նրան արգելք չէր լինում թախծի մէջ ընկնելու։ Արկադիին իրեն լաւ էր զգում Կատեակի հետ, Օդինցեան— Բազարովի, ուստի և սովորաբար ալսպէս էր պատահում.—երկու զուգերը մի քիչ ժամանակ միասին լինելուց լետու, բաժանւում, ամէն մի զուգ մի կողմ էր քաշւում, մանաւանդ զրօսանքի ժամանակ։ Կատեան պաշտօն էր բնութիւնը, Արկադիին էլ բնութիւն սիրող էր, թէպէտ և չէր համարձակւում այդ բանը խոստովանուիլ։ Օդինցեան դէպի բնութիւնը բաւական անտարբեր էր, նոյն էր և Բազարովի։ Մեր բարեկամների համարեա մշտապէս իրարից ջոկնուելն առանց հետեանքի չմնաց—նրանց լարաբերութիւնները, ըսկսան փոխուել։ Բազարովին այլ ևս Արկադիին հետ Օդինցեակի

վրայ չէր խօսում, նույն իսկ դադարեց Օդինցևայի «աղնու-
կանական ձգտումները» վրայ լարձակուելուց. ուղիղ է. առա-
ջուայ նման այժմ էլ էր Վատեպին գովում և Արկադիին մի-
այն խորհուրդ էր տալիս որ չափաւորէ այդ աղջկայ զղախու-
թեան հակումները, բայց նա իւր գովասանքը շտապ-շտապ էր
տալիս, տուած խորհուրդները չոր էին, և առ հասարակ նա
այժմն Արկադիի հետ առաջուանից քիչ էր զրոյց անում...ա-
սես թէ նրանից խոյս տալիս, նրանից ամաչելիս լինէր...

Արկադիին այս ամենը նկատում էր, բայց իւր դիտողու-
թիւնները իւր մէջն էր պահում:

Այս ամէն «նորութեան» իսկական պատճառն այն զգաց-
մունքն էր, որ Օդինցևան ծնեցրել էր Բաղարովի մէջ, մի
զգացմունք, որ տանջում կատաղեցնում էր նրան, և որից նա
անմիջապէս արհամարհական ծիծաղով ու ցինիքական հայհո-
լութեամբ հրաժարուելով կ'հրաժարուէր, թէ որ մէկը թէկուզ
հեռաւոր ակնարկութիւն անէր մին մասին, ինչ որ նրա մէջ
կատարւում էր: Բաղարովը մեծ սէր ունէր զէպի կանայք ու
կանանց զեղեցկութիւնը, բայց իդէալական մտքով, կամ, ինչ-
պէս ինքն էր ասում, ռոմանտիք սէրը, անհեթեթութիւն, ան-
հերելի լիմարութիւն էր կոչում, ասպետական զգացմունքնե-
րը մի տեսակ հրէշաւոր արատ կամ հիւանդութիւն էր համա-
րում, և շատ անգամ իւր զարմանքն է լալտնել, թէ ինչո՞ւ Տոգ-
գեմբուրգին, այդ բոլոր միմանդենդերների ու տրուբադուրների
հետ, զեղին տունը չեն նստացրել: «Թէ որ մի կին քեզ դիւր
եկաւ, աշխատիւր նրանից բան հասկանալ» — ասում էր նա, —
«իսկ եթէ այդ բանը կարելի չէ, — դէ, հարկաւոր էլ չէ, թարկը
տուր՝ — աշխարքիս երեսին հո մենակ դա չէ»: Օդինցևան նը-
րան դիւր էր գալիս՝ — այդ կնոջ մասին տարածուած լուրերը,
նրա մտքերի աղատութիւնն ու անկասկածելի համակրութիւնը, զէպի Բա-
ղարովը տածած անկասկածելի համակրութիւնը — այս ամե-
նը, ըստ երևութին, Բաղարովի օգտին էին. բայց Բաղարովը
շուտով հասկացաւ, որ «նրանից բան չես հասկանալ», սակայն
ինքն էլ էր զարմանում, որ թողնել հեռանալու էլ ուժ չու-
նէր: Հէնց որ Օդինցևան միտքը չէր գալիս, սկսում էր արիւ-
նը բորբոքուել՝ ասենք նա հեշտութեամբ կարող էր իւր ա-
րիւնը հանդարտացնել, բայց դու բանը տես, որ իւր մէջ մի
ուրիշ բան էր բուռն դրել, որը նա երբէք չէր ենթադրում, որը
նա շարունակ ծաղրել էր, որը գրգռում էր նրա բոլոր անձ-

Նասիրութիւնը: Աննա Սերգէնայի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ նա առաջուանից էլ աւելի էր արտայայտում իւր անտարբերութիւնը դէպի ամենայն ռոմանտիք բան. բայց երբ մենակ էր մնում, ցասմամբ հասկանում էր, որ հենց ինքըն էլ ռոմանտիք է: Այն ժամանակ գնում էր անտառ, սկըսում էր խոշոր քալերով ման գալ ու հանդիպած ճիւղերը ջարդոտել և, հաղիւ լսելի ձայնով, իրեն էլ, Օդինցեակին էլ կշտամբել, կամ թէ չէ գնում, քաշում էր խոտնոց կամ մարաղը, աչքերը պինդ փակում էր և ինքն իրեն ստիպում էր քնել, որը, իհարկէ, միշտ չէր աջողւում: Մէկ էլ տեսար լաւկարծ ներան կ'թուար, թէ երբ և իցէ ալդ ողջախոհ ձեռները իւր ճշտովը փաթաթուեն, թէ ալդ հպարտ շրթունքներն արձաղանք կ'տան իւր համբուրին, թէ ալդ խելօք աչքերը քնքշութեամբ — ար, քնքշութեամբ կանդ կառնեն իւր աչքերի վրայ, և իւր ինեքը ման կգալ և մի առ վարկեան մոռացութեան մէջ կընկնի՝ մինչև որ դարձեալ իւր մէջ բորբոքուի ցասումը: Նա լաճախ մերկացնում էր իւր ամեն տեսակ ալդալիսի «ամօթալի» մտածութիւնները: Դէնց գիտենաս դեռ նրան գրողելիս լինէր: Նրբեմըն նրան թըւում էր, թէ Օդինցեակի մէջ էլ է փոփոխութիւն առաջանում, թէ նրա դէմքի արտայայտութեան մէջ մի նոր բան է երևում, թէ գուցէ... Բայց այստեղ ոտները զետնին էր խիում կամ ատամները կրճտացնում և բռունցքով ինք իրեն սպառնում:

Մինչդեռ Բազարովի դիտողութիւնը շատ էլ սխալ չէր: Նա խիստ ներգործութիւն էր ունեցել Օդինցեակի երևակալութեան վրայ, նա զբաղեցնում էր Օդինցեակին և վերջինս նրա մասին շատ էր մտածում: Բազարովի բացակայութեանը Օդինցեան նրան չէր կարօտում, չէր սպասում նրան, բայց երբ որ Բազարովը գալիս էր, նա իսկոյն կենդանանում էր: Օդինցեան հաճութով նրա հետ մնում էր մենակ, հաճութով հետը զրոյց անում, նոյն իսկ ան միջոցին, երբ որ Բազարովը զարացնում էր նրան կամ նրա ճաշակը, զեղարուեստական սովորութիւնները վիրաւորում: Ասես թէ Օդինցեան ուզում էր թէ նրան փորձել և թէ իրեն փորձի ենթարկել:

Մի անգամ Բազարովը պարտիզում Օդինցեակի հետ զբօսնելիս լանկարծ մռալլ ձայնով ասաց, որ շուտով մտադիր է գիւղ, հօրը տեսութեան գնալ... Օդինցեան գոյնը գցեց, կարճեա թէ մի բան նրա սիրտը ծակեց, և ալնպէս ծակեց, որ ինքըն էլ զարմացաւ և լստով երկար մտածում էր, թէ արդեօք

Բնչ րան էր: Բազարովը իւր գնալու մասին ան մտքով չէր ասել, որ նրան փորձի, որ տեսնի թէ գրանից Բնչ է զուրս զալիս—նա երբէք չէր պշարադրում: Այդ առաւօտեան տեսնուել էր իւր նախկին ղեադկալի, արժմ իւր հօրը զործակատար Տիմոֆէիչի հետ: Այդ Տիմոֆէիչը, որ խունացած ղեղին մազերով, քամուց էրած կարմիր դէմքով, և մանր արտասուքի կաթիլները կուչեկած աչքերին մի տեղուած ու ճարպիկ ծերուկ էր, անակնկալ կերպով լանկարծ, հաստ մոխրա-կապտաւուն մահողէ կարծիկ կիսամուշտակը հագին, մէջքին փոկի կտոր կապած, ձիւթով օծած կօշիկները ոտին, ըուսաւ Բազարովի առաջ:

— Զը', ծերուկ, բարով—բացականչեց Բազարովը:

— Աստուծու բարին ձեզ, հոգի-ջան Եւդենիլ Վասիլիչ,— ակսեց խօսել ծերունին և զուարթագին ժպտաց, որի պատճառով ամբողջ դէմքը կնճիռներով ծածկուեցաւ:

— Զը', Բնչ կալ. չլինի իմ ետեիցս են ուղարկել:

— Ի՞նչ էք ասում, հոգի ջան, ինչպէս կարելի է,— թոթովեց Տիմոֆէիչը (նա լիչեց աղալի խիստ պատուէրը, որ ճանապարհ դնելիս տուել էլ նրան).— Աղալիս գործերով քաղաք էի գնում, որ լսեցի թէ ախտեղ էք, հազիւ ճամբի վրայ էր, եկ ասացի, գնամ մի տեսնեմ... թէ չէ ինչպէս կարելի է հրամանոցդ անհանգրիստ անել:

— Դէ, զուրս մի տա.— կտրեց խօսքը Բազարովը:

— Միթէ ախտեղով է քաղաքի ճանապարհը:— Տիմոֆէիչը տրոր-տրոր եկաւ և ոչինչ չպատասխանեց:— Հալրս առօղջ է:

— Փառք Աստուծոյ, առօղջ են:

— Մալրը՞ս:

— Արինա Վասիլենան էլ, փառք Իրա ողորմութեանը:

— Ինձ սպասելիս կլինեն:

Ծերունին իւր փոքրիկ գլուխը մի կողքի ծռեց:

— Ախ, ինչպէս չսպասեն, Եւդենիլ Վասիլիչ, Հաւատա Աստուած, ծնողներիդ նախկին արտիցս արիւն է գնում:

— Դէ լաւ, լաւ. կծիկդ մի բաց անի: Նրանց կասես, որ չուտով կ'գամ:

— Շատ բարի,— հռաչելով պատասխանեց Տիմոֆէիչը:

Ծերունին տնից զուրս զալով, երկու ձեռքով գլխարկը քաշեց գլխին, բարձրացաւ աղքատիկ ճեպակառքը, որ զուրսը դարպասի առաջն էր թողել, ու թեթեւ վազով ճանապարհ ընկաւ, միայն ոչ քաղաքի կողմը:

Նոյն օրը երեկոյեան Օդինցեան Բաղարովի հետ նստած էր իւր սենեակում, իսկ Արկադիոյն դահլիճի մէջ ման էր գալիս ու Կատակոյի նուագածին ականջ դնում։ Իշխանուհին վերեւ, իւր սենեակն էր գնացել։ հիւր ասածդ նրա համար մի անտանելի բան էր, մանաւանդ այս «նորեկուկներին», ինչպէս ասում էր նա։ Հանդիսական սենեակներում նա ինքն իրան փքում էր միայն։ մինչդեռ իւր սենեակում, աղախնի առաջ, երբեմն արկադիոյի հախոյանքներ էր թափում, որ գլխաղարդը կեղծամի հետ վեր-վեր էր թռչկոտում գլխի վրայ։ Օդինցեան այս ամենը գիտէր։

— Ինչպէս թէ ուզում էք գնալ, — ասաց նա, — հապա ձեր խոստումը։

Բաղարովը սթափուեցաւ։

— Ի՞նչ խոստում։

— Մոռացել էք, Ղզում էիք ինձ քիմիայի մի քանի դաս տալ։

— Ի՞նչ արած։ Հալրս ինձ սպասում է. այլ ևս ուշացնել կարելի չէ։ Սակայն կարող էք կարդալ Pelouse et Fremy-ի «Nations Générales de Chemie»-ն. լաւ գիրք է և պարզ էլ գրած։ Ինչ որ պէտք է, ամեն բան կգտնէք այդ գրքի մէջ։

— Իսկ լիչում էք, որ ինձ հաւատացնում էիք, թէ գիրքը կարող չէ բռնել... չեմ լիչում, թէ ինչ բանի տեղն էիք ասում. բայց գիտէք, թէ ինչ եմ ուզում ասել... Յիշում էք։

— Ինչ արած, — կրկնեց Բաղարովը։

— Ի՞նչ կալ գնալու, — ասաց Օդինցեան ձայնը ցածացնելով։

Բաղարովը նախեցաւ նրան։ Օդինցեան գլուխը լեւ գցած, բաղկաթուի մէջքին էր կպցրել, իսկ մինչև արմունկները բաց թեւերն էլ կրծքին ծալել։ Մէկ հատիկ լամպարի լուսով, որի վրայ թղթից չինած էր ցանց էր անցկացրած, նա աւելի զըժ-գոյն էր թւում։ Սպիտակ լայն շրջազգեստը իւր ծալքերով ամբողջովին ծածկել էր նրան։ հաղիւ երևում էին, նոյնպէս իրար վրայ բերած, սառնորի մանրիկ ծալքերը։

— Իսկ մնալու ինչ կալ, — պատասխանեց Բաղարովը։

Օդինցեան գլուխը թեթեւակի նրան դարձրեց։

— Ինչպէս թէ ինչ կալ. միթէ արտեղ ձեր ժամանակն ուրախ չի անցնում։ Կամ գուցէ կարծում էք, թէ արտեղ չմե ափսոսալ ձեր գնալու վրայ։—

— Համոզուած եմ։

Օղինցեան լռեց։—Իզուր էք ալդպէս կարծում։ Ասե՛նք ես ձեր ասածին չեմ հաւատում։ Դուք կարող չէիք ալդ բանը լըրջօրէն ասել։—Բաղարովը դարձեալ նստած էր անշարժ։—Նւզենիլ Վասիլիւն, ինչի էք լռել։

—Ի՛նչ ասեմ ձեզ, Առհասարակ չարժէ մարդկանց համար ափսոսալ, իսկ ինձ համար հո պէտք չէ ու պէտք չէ։

—Ինչո՞ւ։

—Նս դրական, անհետաքրքրական մարդ եմ։ Խօսել չըդիտեմ։

—Դուք, Նւզենիլ Վասիլիւն, ուզում էք, որ ձեզ հաճոցախօսութիւն անեմ։

—Նս ալդպիտի սովորութիւն չունեմ։ Միթէ ինքներդ էլ չզիտէք, որ կեանքի դեղարուեստական կողմն ինձ մատչելի չէ, ան կողմը, որը դուք այնքան գնահատում էք։

Օղինցեան թաշկինակի անկիւնը կծեց։

—Ի՛նչ ուզում էք մտածեցէք, —ասաց նա, —բայց երբ որ քնաք, ես տաղտուկ պիտի զգամ։

—Իրաւ, լամենայն դէպս ձեր տաղտուկը երկար չի քաշի։

—Ինչո՞ւ էք ալդպէս կարծում։

—Նրա համար որ ինքներդ էք ինձ ասել, թէ դուք այն ժամանակ էք տաղտուկութիւն զգում, երբ որ ձեր կարգ ու կանոնը խանդարւում է։ Դուք ձեր կեանքը մի աջնալիս անշեղկանոնաւոր դրութեան մէջ էք դրել, որ ալդտեղ կարող չէ ոչ տաղտուկ լինել, ոչ կարօտ... և ոչ մի ծանր զգացմունք։

—Նւ դուք կարծում էք, թէ ես անսխալական եմ... ալսինքն, որ ես խիստ կանոնաւոր դրութեան մէջ եմ դրել կեանքս։

—Ինչ խօսք։ Ահաւասիկ օրինակ — մի քանի բոպէից ժամը տասը կ'իսիի, և արդէն կանխաւ դիտեմ, որ դուք ինձ կ'վռնդէք։

—Ոչ, չեմ վռնդի, Նւզենիլ Վասիլիւն. կարող էք մնալ։ Բացէք այս պատուհանը... կարծես թէ ուզում է շունչս բռնուել։

Բաղարովը վեր կացաւ և հրեց պատուհանը։ Դա միանգամից թրխկալով բացուեցաւ... Բաղարովը չէր կարծում, թէ ալդպէս հեշտ է բացւում. նրա ձեռները զողզողում էին։ Խաւար, քրնքոյլ գիշերը նաւում էր սենեակի մէջը. երկինքը համարեա թէ սև էր, ծառերը թեթևակի սօսափում էին և ազատ, մաքուր օդի թարմ հոտը փռուեց սենեակի մէջ։

— Բաց թողէք եղեգնեալ վարագուրը և եկէք, նստեցէք,

ասաց Օդինցեական.—Ձեր գնալուց առաջ ուզում եմ մի քիչ հետ-
ներդ զրոյց անել։ Սկէք ձեր մասին մի բան պատմեցէք. եր-
բէք ձեր մասին չէք խօսում։

—Ես, Աննա Սերգէեւնա, աշխատում եմ ձեզ հետ օգտա-
կար բաների վրայ խօսել։

—Շատ համեստ էք... Բայց կ'ուզէի ձեր մասին մի քա-
նի բան դիտնալ, կամ ձեր ընտանիքի, ձեր հօր մասին, որի
պատճառով որ մեղանից հեռանում էք։

«Ինչո՞ւ է այսպիսի բաներ ասում» մտածեց Բաղարովը.

—Ամենեւին հետաքրքրական բաներ չեն դրանք,—ասաց
նա բարձր ձայնով,—մանաւանդ ձեզ համար. մենք անխա-
մարդիկ ենք...

—Հապա ես. ձեր կարծիքով, աղնուակւն եմ։

Բաղարովը աչքը Օդինցեականի վրայ դրեց։

—Այո, — չափազանց ցրած խիստ կերպով ասաց նա. Օդին-
ցեական ծիծաղեցաւ։

—Տեսնում եմ, որ դուք դեռ ինձ լաւ չէք ճանաչում,
թէպէտ և հաւատացնում էի, թէ բոլոր մարդիկ նման են ի-
րար և չարժէ նրանց ուսումնասիրել։ Մի ժամանակ ես իմ
կեանքս կ'պատմեմ ձեզ... բայց առաջ ձերը պատմեցէք։

—Ես ձեզ լաւ չեմ ճանաչում,—կրկնեց Բաղարովը.—Գու-
ցէ ձեր ասածն իրաւացի է. ով գիտէ, դուք արդարեւ ամեն
մարդ մի հանելուկ է։ Հէնց դուք ասե՛նք՝ —դուք հասարա-
կութիւնից խօսւ էք տալիս, հասարակութիւնը ծանրութիւն
է ձեզ համար, — և ձեզ մօտ ապրելու հրաւիրեցիք երկու ուսա-
նող, ինչո՞ւ էք դուք ձեր այդ գեղեցկութեամբ, ձեր այդ խել-
քով զիւղումն ապրում։

—Ինչպէս, Այդ ինչ ասացիք,—արագութեամբ վրայ բե-
րեց Օդինցեական. Իմ... գեղեցկութեամբ։

Բաղարովը լռեցերը կիտեց։

—Այդ մէկ բան է,—մըթմրեաց նա,—ուզում էի ասել,
թէ լաւ չեմ հասկանում, թէ ինչո՞ւ էք զիւղում ընակութիւն
հաստատել։

—Այդ բանը չէք հասկանում... Բայց հո ինքներդ ձեզ
մի որ և իցէ կերպով բացատրե՛լ էք այդ բանը։

—Այո... ինձ թւում է, թէ դուք այն պատճառով էք շա-
քունակ միեկնոյն տեղում մնում, որ շատ էք ինքներդ ձեզ փա-
փուկ կեանքի վարժեցրել, որովհետեւ շատ սիրում էք հեշտ,

լարմարաւոր կեանք, իսկ մնացած ուրիշ բաների վերաբերմամբ անտարբեր էք:

Օգինցեան դարձեալ ծիծաղեցաւ:

— Դուք ամենեւին չէք ուզում հաւատալ, որ ես էլ ընդունակ եմ լափչտակուելու:

Բազարովը ունքերի տակից նրան նայեցաւ:

— Հետաքրքրութեամբ—դուցէ. բայց ոչ ալլապէս:

— Իրաւ: Դէ ալժամ հասկանում եմ, թէ մենք ինչու իրար մօտեցանք. դուք էլ հօ ինձ նման էք:

— Իրար մօտեցանք... — խուլ ձայնով ասաց Բազարովը:

— Հա... ախր մտահան էի արել, որ դուք ուզում էիք գնալ:

Բազարովը վեր կացաւ: Լամպարը աղօտ վառուում էր մըթադնած. քաղցրաբոլոր, առանձնացած սենեակի մէջ տեղում. երբեմնակի տատանուող եղեգնեալ վարազուրի արանքից ներս էր գեղում գիշերուալ գրդուի թարմութիւնը, լսում էր նրա խորհրդաւոր շշուշը: Օգինցեակի մարմնի ոչ մի մասը չէր շարժւում, բայց դադանի լուզումը կամաց-կամաց համակում էր նրան... Նոյնը փոխանցաւ նաև Բազարովին: Նա լանկարծ ըզդաց, որ նորատի, գեղանի կնոջ հետ մենակ է...:

— Այդ ուր,—դանդաղութեամբ ասաց Օգինցեան:

Բազարովը ոչինչ չպատասխանեց և վեր ընկաւ աթոռի վրայ:

— Ուրեմն դուք ինձ մի խաղաղ, քնքշացած, երես առած արարած էք համարում, — շարունակեց Օգինցեան մրկնոյն ձայնով, առանց աչքը պատուհանից հեռացնելու:— Մինչդեռ իմ զիտցածովս ես շատ անբաղդ եմ:

— Անբաղդ էք: Ինչու: Միթէ կարող էք որևէ նշանակութիւն տալ սոոր բամբասանքներին:

Օգինցեակի դէմքը մըռալից, Նա վշտացաւ, որ Բազարովը իւր միտքն աղդէս հասկացաւ:

— Այդ բամբասանքները, Եղեգնի վասիլիսի, մրնչև անդամ իմ ծիծաղս էլ չեն շարժում, և ես աչնքան հպարտ եմ, որ չեմ թող տալ, որ դրանք ինձ անհանգիստ անեն: Նս անբաղդ եմ աչն պատճառով... որ մէջս ապրելու փափագ, ցանկութիւն չկալ: Կասկածանքով էք վրաս նայում. երևի մտածում էք— ալս խօսողը «աղնուական» կին է, որ ամբողջապէս հիւսկէնների մէջ թաղուած, նստած է մախմուրէ բազկաթոռի վրայ: Նս հո չեմ ծածկում— որ սիրում եմ աչն բանը, որ դուք փա-

սիրելի կեանք էք անուանում, բայց միևնույն ժամանակ ես ապրելու քիչ ցանկութիւն ունեմ: Ինչպէս գիտէք, աչնպէս էլ հաշտեցրէք այս հակասութիւնը: Ասենք ձեր աչքում այս ամենը ուղիւնաբեր է:

Բազարովը զուլսը շարժեց:

— Դուք առողջ էք, անկախ, հարուստ. էլ ինչ էք ուզում:

— Ինչ եմ ուզում,— կրկնեց Օդինցեհան և հառաչեց:— Սաստիկ լողնած եմ, ծերացել. ինձ թւում է, թէ խիստ շատ ժամանակ է, որ ապրում եմ: Այո, ապրում եմ,— աւելացրեց նա թեթեալի կրկնոցակը մերկ ձեռներով վրայ քաշելով: Նրա աչքերը հանդիպեցան Բազարովի աչքերին և Օդինցեհան հաղիւ նշկատելի կերպով կարմրեցաւ:— Որքան լիշողութիւններ կան իմ ետեւ՝ Պետերբուրգի կեանքը. հարստութիւն, ապա աղքատութիւն, ապա հօրս մահը, ամուսնութիւնս, ապա, ինչպէս որ հարկն էր, արտասահման գնալս... Յիշողութիւններ շատ, բայց լիշելու բան չկալ, և ապագայում, իմ առաջս— երկար, երկար ճանապարհ է, իսկ նպատակ չկալ...: Ուստի և չեմ էլ ուզում առաջ գնալ:

— Այդպէս լուսախաբուած էք ուրեմն, հարցրեց Բազարովը:

— Ոչ,— կանգ առնելով ասաց Օդինցեհան,— բայց ես լիացած չեմ: Ինձ թւում է, որ եթէ կարողանալի մի բանի պիտի կպչեմ...

— Դուք սիրել էք ուզում, — ընդմիջեց Բազարովը, — բայց սիրել էլ՝ կարող չէք — ահաւասիկ ձեր դժբաղդութիւնը:

Օդինցեհան սկսաւ իւր կրկնոցակի թեւերը դիտել:

— Միթէ կարող չեմ սիրել, — ասաց նա:

— Դժուար թէ: Բայց ես իզուր արդ բանը դժբաղդութիւն անուանեցի: Ընդհակառակն, աւելի նա է ցաւելու արժանի, ում գլխին որ արդ բանը կգալ:

— Ի՞նչ բան:

— Սիրահարութիւն:

— Դժուար արդ որտեղից գիտէք:

— Լսելով գիտեմ, — նեղացած պատասխանեց Բազարովը:

«Դու ծեքծեքում ես», մտածեց նա, «ձանձրութեւս ըզգում և պարապութիւնից ինձ զրգռում ես, մինչդեռ ես...»: Արդարեւ, նրա սիրտը հենց ուզում էր դուրս պրծնի:

— Մանաւանդ որ դուք գուցէ և շատ խստապահանջ էք, — ասաց նա ամբողջ մարմնով առաջ խոնարհած ու բազկաթուռի եզերքի ժապաւէնի հետ խաղալով:

—Գուցէ՛ Իմ կարծիքովս — կամ ամեն ինչ, կամ ոչինչ — Կեանքի փոխարէն կեանք, Թէ իմն առար — տուր քոնը, և արդ ժամանակ արդէն առանց ամոստանքի, անդարձ կերպով։ Ապա Թէ ոչ՝ աւելի լաւ է ոչինչ չլինի։

—Վատ բան չէ—նկատեց Բաղարովը.—արդար պայման է, և զարմանում եմ, Թէ ինչպէս է եղել, որ մինչև օրս...ձեր որոնածը գտած չէք։

—Իսկ դուք կարծում էք Թէ հեշտ բան է բոլորանուիրաբար մի որև իցէ բանի նուիրուիլը։

—Թէ որ սկսես մտածել ու սպասել, ինքդ քեզ մեծ գին տաս, այսինքն Թանկ գնահատես—հեշտ չի լինիլ, մինչդեռ առանց երկար-բարակ միտք անելու նուիրուիլը շատ հեշտ բան է։

—Ինչպէս ինքդ քեզ գին չտաս։ Թէ որ ես գին չունենամ, էլ ձևն է պէտք իմ անձնուիրութիւնս։

—Այդ արդէն իմ գործն չէ. Թող ուրիշը որոշէ իմ գինըս։ Գլխաւորը՝ պէտք է նուիրուել գիտենալ։

Օղինցեալն բազկաթռուի մէջ մի քիչ առաջ քաշուեց նստաւ։

—Այնպէս էք խօսում, կարծես Թէ դուք արդ ամենը փորձած լինիք,—սկսեց նա։

—Լեզուիս եկաւ՝ ասացի, Աննա Սերդէննա, գիտէք, որ այս ամենը իմ խելքիս բաները չեն։

—Իսկ ինքներդ կ'կարողանալիք նուիրուել։

—Չգիտեմ, չեմ ուզում պարծենալ։

Օղինցեալն ոչինչ չասաց, և Բաղարովն էլ լռեց։ Ընդունարանից դաշնամուրի ձայներ հասան նրանց։

—Այս ինչու է Կատեան այսպէս ուշ ժամանակ նուագում,—նկատեց Օղինցեալն։

Բաղարովը տեղից վերկացաւ։

—Ուղիղ որ արդէն ուշ է, ժամանակ է ձեզ հանդստանալու։

—Սպասեցէք, ինչու էք չտապում... պէտք է ձեզ մի խօսք ասեմ։

—Ի՞նչ խօսք։

—Սպասեցէք,— շնչաց Օղինցեալն։ Նրա աչքերը կանգ առան Բաղարովի վրայ. Թւում էր, Թէ ուշադրութեամբ դիտում էր նրան։

Բաղարովը քալեց սենեակի մէջ, լետով լանկարծ մօտե-

ցաւ նրան, չտապով ասաց «մնաք բարով», նրա ձեռքն աչնալէս պինդ հուպ տուեց, որ քիչ էր մնում արիկինը ճշար, և դուրս գնաց: Օդինցեան հուպ եկած մատները շրթունքներին տարաւ, վրան փչեց, և լանկարծ, բուռն կերպով վեր թռաւ տեղից, և արագ քալելով դէպի դուռը գնաց, ասես թէ ուզում էր Բաղարովին լետ կանչել... Սրծաթէ մատուցարանի վրալ լարանը ձեռին ներս մտաւ աղախինը: Օդինցեան կանգ առաւ, պատուիրեց աղախինն հեռանալ և նորից նստեց ու նորից սկսեց միտք անել: Նրա մագի հիւսը լետ էր եղել և սև օձի նման ընկել ուսի վրալ: Դեռ երկար ժամանակ լամպարը վառ էր Աննա Սերգէնալի սենեակում, և երկար ժամանակ նա մնացել էր անշարժ և երբեմն-երբեմն միայն մատներով շփում էր իւր ձեռները, որոնց գիշերալին ցուրտը դադում էր:

Իսկ Բաղարովը մի երկու ժամ անց, ցողից թրջուած կօշիկներով, զգզուած մազերով ու թթուած, վերադարձաւ իւր ննջարանը: Արկադիւն գիրքը ձեռին սերթուկի բոլոր կոճակները կոճկած նստած էր գրասեղանի առաջ:

— Դեռ չես պառկել, — կարծես դժգոհ կերպով ասաց Բաղարովը:

— Այսօր Աննա Սերգէնալի հետ երկար նստար, — ասաց Արկադիւն՝ նրա հարցին չպատասխանելով:

— Այո, մինչ դու և Կատեբինա Սերգենան դաշնամուր էիք նուագում, ես էլ նրա սենեակումն էի:

— Ես չէի նուագում... սկսեց Արկադիւն և լռեց: Նա ըզզում էր, որ արցունքը լցում է աչքը, բայց չէր ուզում, որ իւր ծաղրաբան ընկերոջ առաջ լաղ լինի:

XVIII

Միւս օրը, երբ որ Օդինցեան թէլի եկաւ, Բաղարովը երկար ժամանակ զուլիւր իր բաժակի վրալ քաշ զցած նստել էր, ու մէկ էլ լանկարծ մտիկ տուեց նրան... Օդինցեան նախցաւ նրա կողմը, ասես թէ նա իրեն պոթած լինէր, և Բաղարովին թուաց, թէ արիկնոջ դէմքը ասես թէ մի գիշերուալ մէջ թեթևակի դժգունած լինէր: Օդինցեան շուտով քաշուեցաւ իւր սենեակը և մէկ էլ նախաճաշին եկաւ: Առաւօտից եղանակն անձրևալին էր, զրօսնելու հնար չկար: Բոլորն էլ ընդունա-

բան էին հաւաքուել: Արկաղիլն վեր առաւ ամաղորի վերջին համարն ու սկսեց կարդալ: Իշխանուհին, ըստ սովորութեան, սկզբում դէմքի վրայ զարմանք արտայայտեց, հէնց զիտեհաս Արկաղիլն մի անպատեհ բան հնարած լինէր, ապա չար հայեացքը սեւեռեց նրան. բայց Արկաղիլն նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց:

—Սեդեհիլ Վասիլեհի,—ասաց Աննա Սերդէնեան,—եկէք իմ սենեակը գնանք...: Ուզում եմ ձեզ բան հարցնել... Նրէկ մի ձեռնարկի անուն տուիք...:

Նա վերկացաւ ու դէպի դուռը գնաց: Իշխանուհին մի ամպիսի արտայայտութեամբ սկսաւ իւր չորս բոլորքը նայել, որ կարծես թէ ուզում էր ասել. «տեսէք, տեսէք, թէ ինչպէս եմ զարմանում» և դարձեալ աչքը Արկաղիլի վրայ սեւեռեց, բայց սա ձայնը բարձրացրեց, Վատեալի աչքին նայեց, որի կողքին նստած էր, ու շարունակեց իւր կարդալը: Օդինցեան արագ քալերով իւր առանձնասենեակին հասաւ. Բաղարովը, տոանց աչքը վեր բարձրացնելու, հապա միայն իւր առաջից սահող մետաքսեայ զգեստի նուրբ սուլոցին ու խշխշոցին ազնիւ դնելով, աշխուժութեամբ հետևում էր նրան: Օդինցեան նստաւ նոյն բազկաթոռի վրայ, որ նախօրեկին էր նըստած, և Բաղարովն էլ իւր երէկուայ տեղը բռնեց:

—Ինչպէս էր այդ գրքի անունը,—սկսեց Օդինցեան փոքր ինչ լեւուց խոսիլ:

—Pelouse et Frémy, Notions générales... պատասխանեց Բաղարովը:—Ասեմք կարելի է ձեզ առաջարկել նաև—Ganot-ի Traité élémentaire de physique expérimentale: Այդ գրքի պատկերներն աւելի պարզ են և առհասարակ այդ դասագիրքը...:

Օդինցեան ձեռքը առաջ մեկնեց:

—Ներեցէք, Սեդեհիլ Վասիլեհի, ես ձեզ այստեղ դատադրքերի մասին դատողութիւններ անելու համար չկանչեցի: Ուզում էի մեր երեկուայ խօսակցութիւնը վերսկսել, Խիստ լանկարծակի էր ձեր հեռանալը...: Ձեզ ձանձրալի չի լինիլ:

—Նա պատրաստ եմ. Աննա Սերդէնեա: Բայց երէկ ինչ էինք խօսում մենք:

Օդինցեան ծուռ-ծուռ նայեցաւ Բաղարովին:

—Մենք կարծեմ երջանկութեան վրայ էինք խօսում: Նա իմ մասին էի պատմում ձեզ: Ի դէպ ահա «երջանկութիւն» ասացի: Ասացէք ինչիցն է, որ նոյն իսկ երբ վախելու ենք,

